

*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵԼԵԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Օգոստոսի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոտեղեկատվության բաժինը՝ մասնագիտացված ագրոտեղեկատվական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Օգոստոսի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական և բացասական շեղումներով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են օգոստոսի 5-ին. Տավուշում գրանցվել է $+28...+33^{\circ}\text{C}$ (Բազրաբաշեն՝ $+34^{\circ}\text{C}$), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ $+29...+31^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+36...+38^{\circ}\text{C}$, Սյունիքի հովտային շրջաններում՝ $+34...+36^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+27...+29^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+25...+30^{\circ}\text{C}$ (Գյումրի՝ $+32^{\circ}\text{C}$), Կոտայքի լեռնային շրջաններում՝ $+27...+29^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+32...+34^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $+25...+28^{\circ}\text{C}$ (Սեյրնուվկա՝ $+22^{\circ}\text{C}$), Լոռիում՝ $+26...+28^{\circ}\text{C}$, Արմավիրում, Արարատում՝ $+36...+38^{\circ}\text{C}$, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ $+25...+28^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+32...+37^{\circ}\text{C}$:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են օգոստոսի 1-ին. Տավուշում գրանցվել է $+12...+17^{\circ}\text{C}$, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ $+9...+11^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+16...+18^{\circ}\text{C}$, Սյունիքի հովտային շրջաններում՝ $+16...+20^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+9...+13^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+8...+12^{\circ}\text{C}$, Կոտայքի լեռնային շրջաններում՝ $+8...+13^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+16...+18^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $+9...+14^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+11...+14^{\circ}\text{C}$ (Տաշիր՝ $+8^{\circ}\text{C}$), Արմավիրում, Արարատում՝ $+16...+20^{\circ}\text{C}$, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ $+8...+13^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+15...+19^{\circ}\text{C}$:


Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակային տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 2-9մմ (11-59%), Լոռիում՝ 1-18մմ (4-100%), Տավուշում՝ 1-13մմ (8-204%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 2-34մմ (34-151%), Գեղարքունիքում՝ 1-12մմ (7-70%), Կոտայքի լեռնային շրջաններում (Հանքավանում՝ 35մմ), Արմավիրում՝ 2մմ (83%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 2մմ (34%), Սյունիքի նախալեռներում՝ 2-7մմ (41-81%): Արագածոտնի, Կոտայքի, Վայոց ձորի նախալեռներում, Արարատում և Սյունիքի հովտային շրջաններում փասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են օգոստոսի 1-ին. լեռնային շրջաններում՝ +6...+9°C, Արարատյան դաշտում, Արագածոտնի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +16...+19°C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը



Տասնօրյակի ընթացքում հովտային շրջաններում կատարվել է պտղաբույսերի, բանջարանոցային մշակաբույսերի, ձմերուկի և խաղողի բերքահավաք:

Նախալեռնային շրջաններում շարունակվել է պտղաբույսերի, եգիպտացորենի, կաղամբի, կարկոֆիլի հասունացումը և բերքահավաքը, սկսվել է բանջարանոցային մշակաբույսերի հասունացումը, խոտաբույսերը ծաղկել են երկրորդ հունձից հետո:

Լեռնային շրջաններում կատարվել է հացահատիկային մշակաբույսերի և պտղաբույսերի բերքահավաք: Առաջացել են կորնգանի ծաղկաբույլերն առաջին հունձից հետո:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել մշակաբույսերի հասունացման, պտղաբույսերի մոտ շաքարային նյութերի կուտակման համար:

